ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Նիստի անցկացման օրը, ժամը
24.11.2023թ. ժամը՝ 11:00

Նիստի անցկացման վայր՝
Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ

1.	Հրաչյա Զաքոյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
2.	Լիլիթ Զաքարյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
3.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
4.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
5.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
6.	Ինգա Հարությունյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
7.	Հակոբ Ավագյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
8.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

9.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային-պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Հրավիրված անձինք

10.	Լուսինե Սարգսյան	Բրիտանական դեսպանատուն Երևանում
11.	Արամ Վարդանյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
12.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ

Քարտուղարության անդամներ

25.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
26.	Փառքուհի Ղազարյան	Ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի գլխավոր մասնագետ
27.	Թամարա Սարգսյան	Ձեռներեցության վարչության փորձագետ
28.	Վահե Մխիթարյան	Ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
29.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
30.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
31.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
32.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ

33.	Վիկտորիա Կամարյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
34.	Հասմիկ Տոնապետյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հարց 1. Դեպի ՀՀ այլընտրանքային լոգիստիկ ուղիների զարգացման միջոցառում («ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հարց 2. ՍՊԸ բաժնեմասի կամ Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկելի փոխառության պայմանագրի վերաբերյալ իրավական կարգավորումների ներդրում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ):

Հարց 3. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխման նախաձեռնություն («ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ):

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նիստը նախագահում էր Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը ներկայացրեց օրակարգային հարցերը՝ նշելով, որ դրանք երեքն են: Միաժամանակ, պարոն Պատվականյանը նշեց, որ հաշվի առնելով, որ գործուղման մեջ լինելու հանգամանքով պայմանավորված, նիստին բացակայում է ենթախորհրդի նախագահ՝ Էկոնոմիկայի նախարար պարոն Վահան Քերոբյանը, առաջարկեց 1-ին հարցի քննարկումը հետաձգել մինչև հաջորդ նիստ: Առաջարկությունը նիստի մասնակիցների կողմից ընդունվեց միաձայն:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 2. ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի զեկուցմամբ ներկայացվեց ՍՊԸ բաժնեմասի կամ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկելի փոխառության պայմանագրի վերաբերյալ իրավական կարգավորումների ներդրման նպատակով առաջարկվող օրենսդրական փոփոխությունների փաթեթը: Մասնավորապես նշվեց, որ խնդիրն առաջացել է այն պատճառով, որ ՀՀ

քաղաքացիական օրենսգրքով, ««Բաժնետիրական ընկերությունների մասին» և ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների առկա կարգավորումները թույլ չեն տալիս բաժնետոմսի կամ բաժնեմասի դիմաց վճարել հաշվանցի միջոցով, որն, ըստ էության, բացառում է փոխառության դիմաց բաժնետոմսի տրամադրումը: Խնդրի կարգավորման նպատակով մշակված նախագծով սահմանվել են մի շարք կարգավորումներ՝ փոխարկելի փոխառության պայմանագրի հասկացությունը և դրա կիրառման հիմնական պայմանները՝ հիմք ընդունելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ձևավորված գործարար պրակտիկան:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ փոխառության պայմանագրով, որի համաձայն փոխառու է հանդիսանում բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կարող է նախատեսվել, որ փոխատուն կարող է կամ պարտավոր է փոխառության գումարի կամ դրա մասի վերադարձ և տոկոսների կամ դրանց մի մասի վճարում պահանջելու փոխարեն փոխառության պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով փոխառուից պահանջել իր օգտին տեղաբաշխել համապատասխանաբար պայմանագրով սահմանված կարգով որոշված քանակի, տեսակի և դասի բաժնետոմսեր կամ տրամադրել բաժնեմասեր (փոխարկելի փոխառության պայմանագիր): Առաջարկվում է նաև սահմանել, որ փոխարկելի փոխառության պայմանագրում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկման հնարավորությունը պետք է սահմանված լինի պայմանագրի կնքման պահին, ինչպես նաև կանոնակարգել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և բաժնետիրական ընկերությունների կողմից փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման մասին որոշման կայացման և դրա հիման վրա բաժնետոմսերի/բաժնեմասի տրամադրման կարգը:

Նախագծով սահմանվել է նաև, որ փոխարկելի փոխառության պայմանագրով փոխառու չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված սուբյեկտները: Բացի այդ սահմանվել է արտարժույթով տրամադրված փոխարկելի փոխառության դեպքում փոխառու ընկերության կանոնադրական կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացված է համարվելու ՀՀ դրամով՝ փոխարկման մասին պահանջը փոխառու ընկերության կողմից ստանալու օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը տեղեկացրեց, որ նախագիծը քննարկվել է իրավաբանական ընկերություն գործընկերների հետ, Կենտրոնական բանկի հետ և նախագիծը լրամշակվել է վերջիններիս առաջարկությունների հիման վրա, այն քննարկվել է նաև խորհրդի անդամների հետ:

Բիզնես և իրավաբանական խորհրդատվության ընկերության ներկայացուցիչ Արա Խզմալյանը, նշեց, որ նախագիծը բավականին սպասված նախագիծ է: Հարցի կարգավորման մասով քննարկումներ իրականացվել են դեռևս 2019 թվականից Արդարադատության նախարարության կողմից իրականացվող բարեփոխումների շրջանակներում: Առկա խնդիրը պայմանավորված է կապիտալի փոխարկելու հետ կապված արգելքով: Նշված արգելքի սահմանման նպատակն էր, որ ի սկզբանե հիմնադրման պահին յուրաքանչյուր մասնակից հիմնադրման համար իր հատկացվելիք կապիտալը հստակ որպես կապիտալ տրամադրի, քանի որ հնարավոր է ռիսկերը նվազեցնելու համար փոխառություն կանեն, այնուհետ նոր փոխառությունը կդարձնեն կապիտալ: Ինչ վերաբերում է նախագծով առաջարկվող կարգավորումներին, դրանցով հաշվի են առնված Կենտրոնական բանկի պարզաբանումները և այդ առումով նախագծի շուրջ վերջինիս հետ ձեռք է բերվել փոխհամաձայնություն: Այս մասով ԿԲ (Կենտրոնական բանկ) տեսակետը ներկայացրեց ԿԲ խորհրդի անդամ Արտակ Մանուկյանը: Վերջինիս տեղեկացրեց, որ ԿԲ-ն՝ ստարտափների համար այլընտրանքային ֆինանսավորման գործիքների ուժեղացման՝ ՍԵՅՖ-ի համատեքստում ի սկզբանե գաղափարին կողմ է եղել և հետևաբար գաղափարի շարունակականության մասով ևս կողմ է: Կենտրոնական բանկը տրամադրել է իր դիտարկումները և նախագիծը կարիք ունի որոշ տեխնիկական շտկումների, ինչի մասով տեղեկատվությունը, իհարկե, շուտով կտրամադրվի: Պարոն Մանուկյանը անդրադարձավ փոխարժեքի կուրսի հետ կապված քննարկման ընթացքում հնչած մտահոգություններին՝ տեղեկացնելով, որ այս մասով որևէ խնդիր առկա չէ, բացի այն տեխնիկական խնդիրներից, որի մասին արդեն ասվեց:

Հարցի վերաբերյալ իր դիտարկումները ներկայացրեց նաև Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը՝ նշելով, որ ըստ էության, քննարկվող ցանկացած գործարք կարող է իրականացվել միայն բաժնետերերի միաձայն որոշմամբ: Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար պարոն Պատվականյանը, ի հավելում նշվածի, տեղեկացրեց, որ դիտարկվող կարգավորումը ոչ միայն այլընտրանքային ֆինանսավորման, այլ նաև տարբեր ֆինանսական գործիքների փոխակերպման ճկունության հնարավորություն տվող գործիք: Այս մասով պարոն Պատվականյանը ներկայացրեց որոշ պարզաբանումներ, վերջինիս կիրառման հնարավորությունների մասով: Հարցի վերաբերյալ դիտարկումներ և հարցադրումներ ներկայացրեցին խորհրդի անդամները:

Հարցի վերաբերյալ իրենց մտահոգությունները ներկայացրեցին Պետական եկամուտների կոմիտեի և Ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ Լեռնիկ Հարությունյանը և Օրի Ալավերդյանը՝ կարգավորման կիրառման մասով հարկային օրենսդրության տեսանկյունից հնարավոր խնդիրների հետ կապված:

ՈՐՈՇՎԵՑ

Նիստը նախագահող Ռաֆայել Գևորգյանի առաջարկությամբ՝ առաջարկվեց արձանագրել, որ հարցի վերաբերյալ առկա է ընդհանուր կոնսենսուս և բարձրաձայնված տեխնիկական շտկումներից հետո նախագիծը կշրջանառվի սահմանված կարգով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 3. ««Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն՝ Հայկազ Ֆանյանի և ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի համազեկուցմամբ ներկայացվեց անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխման նախաձեռնությունը: Մասնավորապես ներկայացվեց խնդիրը: Հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն՝ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները: Միաժամանակ, նույն հոդվածը սահմանում է, որ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Այս կարգավորումն ուժի մեջ է մտել 2002 թվականից դեկտեմբերի 31-ից և գործում է մոտ 21 տարի: Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի համաձայն, ստացվում է, որ դիցուք 200.000 դրամի դեբիտորական պարտքը անհուսալի ճանաչելու համար հարկ վճարողը առնվազն պետք է ծախսի 110.000 դրամ, ինչը շատ դեպքերում դառնում է տնտեսապես ոչ շահավետ: Խոշոր տնտեսավարողներն ունեն համապատասխան մասնագետներ և կարող են որոշակիորեն կրճատել դատական գործընթացներին առնչվող ծախսերը, սակայն վերջիններիս ունեցած փոքր արժեքով դեբիտորական պարտքերի մեծ թիվը չեղարկում է այդ առավելությունը: Համաձայն Հայաստանի Ներդրումային Խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի, հաշվի առնելով պաշտոնական վիճակագրություն այդ մասով չկա, հարցումներ են կատարվել հաշվապահական և աուդիտորական ընկերությունները հատկապես ՓՄՁ մասով: Հարցումների արդյունքներով պարզվել է, որ խոշոր ընկերությունները հաճախ վճարում են անհուսալի դեբիտորական պարտքերի գումարների մասով առաջացած շահութահարկի գումարները՝ դրանց «անհուսալի լինելն ապացուցելու» և ծախս ճանաչելու հետ կապված վարչարարական գործընթացներից զերծ մնալու նպատակով:

Փոքր տնտեսավարողներն, ընդհակառակը, չունեն անհրաժեշտ կարողություններ իրենց ուժերով դատարան դիմելու և ստիպված են յուրաքանչյուր դեպքի համար վճարել փաստաբանին, ինչը մեծացնում է միավոր անհուսալի դեբիտորական պարտքին բաժին ընկնող վարչարարական ծախսը:

Պարոն Աղաջանյանը նշեց նաև, որ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման վերաբերյալ ՀՀ կառավարության 05.10.2017թ. 1373-Ն որոշմամբ սահմանված պահուստավորման առավելագույն ժամկետը 365 օրն է:

Դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու և ծախսագրելու համար անհրաժեշտ է մինչև այդ ժամկետը ունենալ դատարանի վճիռ, ինչը գործնականում անհնար է: Նախ, գործարար հարաբերություններում անհրաժեշտ է որոշակի ժամանակ՝ պարտքը գործընկերային կարգով, առանց դատարանի միջամտության, ստանալու համար, որից հետո միայն կարող է որոշում ընդունվել դատարան դիմելու մասին: Որպես կանոն, «սպասման ժամկետը» մեկ տարի է:

Վերոհիշյալ խնդրի կարգավորման նպատակով առաջարկվում է վերացնել 100.000 դրամը գերազանցող դեբիտորական պարտքերն անհուսալի ճանաչելու նպատակով դատական ակտի առկայության պահանջը, այն է

- բարձրացնել 100.000 դրամ շեմը՝ սահմանելով 250.000 դրամ,
- նախատեսել, որ 250 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջով հայցը դատարանի կողմից վարույթ ընդունվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության ուժի մեջ մտնելու պահից դեբիտորական պարտքի գումարը այդ հարկային տարում ճանաչվում է որպես համախառն եկամտի ավելացում:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց «ՓՄՁ համագործակցություն» ասոցիայի ներկայացուցիչ Հակոբ Ավագյանը, ով հայտնեց իր համոզմունքը առ այն, որ մի շարք կարգավորումների սահմանումը ի սկզբանե հիմնավորված չի եղել՝ այդ թվում նաև 100 հազար դրամ շեմի սահմանումը: Պարոն Հակոբյանի համաձայն, թվային շեմի սահմանման փոխարեն առավել նպատակահարմար կլինի ներդնել մեխանիզմ՝ ընկերությունների շրջանառությունից կախված որոշակի տոկոսի հաշվարկի կիրառմամբ: Պարոն Ավագյանը նշեց նաև, որ վերոհիշյալ կարգավորումը վերաբերվում է շահութահարկ վճարողներին, իսկ շրջանառության հարկով հարկվող ընկերությունների համար այս մասը կարգավորված չէ բայց չէ որ վերջիններս նույնպես ունենում են նման անհուսալի դեբիտորական պարտքեր, սակայն օրենսդրությամբ նախատեսված չեն վերջիններիս դեպքերը: Ըստ այդմ՝ էլ, որպես հնարավոր լուծում է շրջանառության հարկ վճարողների ևս տալ անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման հնարավորություն կամ արտադատարանական կամ արբիտրաժային դատարանների ինստիտուտների կայացման հարցն է, որոնց միջոցով կլուծվեն անհուսալի դեբիտորական պարտքերի հետ կապված վեճերը:

Պարոն Հակոբյանի կողմից ներկայացված խնդիրների հետ կապված առարկություններ ներկայացրեցին Ֆինանսների նախարարության և ՊԵԿ ներկայացուցիչներ Օրի Ալավերդյանը և Լեռնիկ Հարությունյանը: Վերջիններս, չնայած հարցի շուրջ առկա տարաձայնություններին, հայտնեցին իրենց համաձայնությունն ու պատրաստակամությունը՝ ներկայացված կարգավորումների վերաբերյալ փոխհամաձայնություն ձեռք բերելու նպատակով քննարկումներին մասնակցելու հարցում:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկման արդյունքները ի մի բերելով նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը նշեց, որ հաշվի առնելով դատարանների ծանրաբեռնվածությունը և ՓՄՁ–երի համար վարչական ծախսերի նշանակությունը, այնուամենայնիվ կարգավորման անհրաժեշտությունը առկա է՝ չարաշահումներից խուսափելու հնարավորությունները բացառելով: Հաշվի առնելով նշվածը, պարոն Գևորգյանը առաջարկեց նախագծի հիմնավորման տեսանկյունից, նախարարությունում առկա տեղեկատվության դիտարկմամբ, կատարել վերլուծություն, որից հետո կազմակերպել քննարկում ՊԵԿ և Ֆինանսների նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

_____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ